ՍԴ1/0063/01/21
(ՀԿԴ/0050/01/22)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30 ապրիլի 2024 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ՍԴ1/0063/01/21 (ՀԿԴ/0050/01/22) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի մարտի 1-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2021 թվականի սեպտեմբերի 14-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 69110521 (ՍԴ1/0063/01/21) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Դանիել Մանվելի Հակոբյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Կարեն Լորիկի Ներսիսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Վաչե Սամվելի Հովհաննիսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով, Գարիկ

Յուրիկի Սողոմոնյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով, Նվեր Յուրիկի Ստեփանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով և Կարեն Սոկրատի Մարգարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով:

2021 թվականի սեպտեմբերի 15-ին թիվ ՍԴ1/0063/01/21 քրեական գործն ընդունվել է վարույթ և 2021 թվականի սեպտեմբերի 16-ին որոշում է կայացվել դատական քննություն նշանակելու մասին:

2022 թվականի մայիսի 5-ին քրեական գործը վերամակագրվել է դատավոր Լ.Սեփխանյանին և 2022 թվականի մայիսի 17-ին ընդունվել է վարույթ:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հունիսի 1-ի որոշմամբ քրեական գործի քննությունը վերսկսվել է և նշանակվել է դատական քննության:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի օգոստոսի 26-ին որոշում է կայացրել քրեական գործն ըստ ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

1.1. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 7-ի որոշմամբ թիվ ՀԿԴ/0050/01/22 (ՍԴ1/0063/01/21) քրեական գործն ընդունվել է վարույթ և 2022 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ գործի քննությունը վերսկսվել է:

1.2. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի փետրվարի 19-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0050/01/22 (ՍԴ1/0063/01/21) քրեական գործն ըստ ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի մարտի 1-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ1/0063/01/21 (ՀԿԴ/0050/01/22) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի ապրիլի 25-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ Դանիել Մանվելի Հակոբյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ այն բանի համար, որ *«նա համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակություններին համակատարման ձևով հանցակցելու վերաբերյալ նախնական համաձայնություն ձեռք բերելով՝ Կարեն Լորիկի Ներսիսյանի և անհայտ անձի հետ, համատեղ, մեկը մյուսի գործողությունները լրացնելով՝ միասնական դիտավորությամբ՝ շարունակական արարքներով, հանցավոր ճանապարհով ֆինանսական միջոցներ ձեռք բերելու շահադիտական նպատակով՝ 2019 թվականի փետրվարի 28-ից մինչև 2020 թվականի հուլիսի 09-ն ընկած ժամանակահատվածում «ok.ru» սոցիալական կայքում գրանցված օգտատերերի էջերից բեռնել են վերջիններիս էջերում առկա լուսանկարները և տվյալները, որոնց միջոցով նույն կայքում ստեղծել են կեղծ էջեր՝ դրանք նմանեցնելով «ok.ru» սոցիալական կայքում գրանցված օգտատերերի իրական էջերին և ստեղծված կեղծ նմանակ էջերի միջոցով իրական էջերի օգտատերերի անունից, նամակագրություն են վարել իրական էջերի ընկերների ցանկում ընդգրկված անձանց հետ, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ նրանց քարտային հաշիվներից գումարներ հափշտակելու չկոնկրետացված դիտավորությամբ, վերջիններիս քարտային հաշիվներին գումարներ փոխանցելու պատրվակով, խաբեությամբ ստացել են նրանց կամ նրանց մտերիմների բանկային քարտերի տվյալները՝ քարտերի վավերապայմանները, կամ դրանց երկկողմ լուսանկարները, ինչպես նաև՝ դրամական ելքային փոխանցումների հաստատման նպատակով քարտային հաշիվներին փոխկապակցված բջջային հեռախոսահամարներին հաղորդագրությունների ձևով թվերի տեսքով ստացված գաղտնաբառերը, այն ներկայացնելով որպես իրենց կողմից փոխանցվող գումարի հաստատման գաղտնաբառ, որոնց և համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, հիշյալ ժամանակահատվածում խմբի կազմում, համատեղ, մեկը մյուսի գործողությունները լրացնելով, չկոնկրետացված մեկ միասնական դիտավորությամբ մի շարք անձանց քարտային հաշիվներից հափշտակել են առանձնապես խոշոր*

չափերի՝ 10.914.540 ՀՀ դրամ գումար և նպատակ ունենալով՝ հանցավոր գործունեության ընթացքում՝ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի՝ 10.914.540 ՀՀ դրամ գումարը՝ գույքը, օրինականացնելու, հանցավոր խմբում ընդգրկված անձանց, ինքնության գաղտնիությունը և հանցավոր գործողության կատարումը թաքցնելու մեխանիզմն ի կատար ածելու նպատակով «ok.ru» կայքում գրանցված օգտատերերից խաբեությամբ ստացել են նրանց կամ նրանց մտերիմների կողմից օգտագործվող բջջային հեռախոսահամարները և այդ հեռախոսահամարներին ՀՀ և ՌԴ տարածքում գործող էլեկտրոնային դրամապանակներ ակտիվացնելու նպատակով հաղորդագրությունների ձևով թվերի տեսքով ստացված գաղտնաբառերը, որոնց և համակարգչային տեխնիկայի, բջջային հեռախոսների, միջոցով ՀՀ-ում գործող՝ «Թել-Սել» ՓԲ, «Իդրամ» ՍՊ և «Իզի Փեյ» ՍՊ ընկերություններում, ինչպես նաև՝ ՌԴ տարածքում գործող «Qiwi» ընկերությունում գրանցել են էլեկտրոնային դրամապանակներ և հաշվառման հաշիվներ, որոնց տնօրինման և օգտագործման համար, ինչպես նաև՝ հանցավոր խմբում ընդգրկված անձանց, ինքնության գաղտնիությունը և հանցավոր գործողության կատարումը թաքցնելու մեխանիզմն ի կատար ածելու նպատակով դրանք նույնականացրել են «ok.ru» սոցիալական կայքի օգտատերերից խաբեությամբ ստացած բանկային քարտերի և անձնագրային տվյալներով: «ok.ru» սոցիալական կայքի օգտատերերից հափշտակված առանձնապես խոշոր չափերի դրամական միջոցները, գույքը՝ կենտրոնացնելով իրենց կողմից կառավարվող և տնօրինվող «Իդրամ», «Թել-Սել Ուալլետ» և «Իզի Ուալլետ» էլեկտրոնային դրամապանակների հաշիվներում դրանք օրինականացնելու և դրանց հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով փոխանցել են՝ «QiwiWallet Russian», «Yandex.Money Russian» էլեկտրոնային դրամապանակների հաշիվների և բանկային քարտերի հաշիվների, իսկ հանցավոր խմբում ընդգրկված անձանց, ինքնության գաղտնիությունը և հանցավոր գործողության կատարումը թաքցնելու նպատակով՝ ապօրինի հասանելիություն են ստացել իրենց հարևանությամբ բնակվող անձանց բնակարաններում տեղադրված «WiFi» ուղեցրիչներին և համակարգչային տեխնիկայով գործողություններ կատարելու ընթացքում համացանցային հասանելիություն են ստացել այլ անձանց անվամբ կապի օպերատորների կողմից

տրամադրված համացանցային հասանելիության IP (ինտերնետ պրոտոկոլի) հասցեներից (…)»[1]:

4.1. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ Կարեն Լորիկի Ներսիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ այն բանի համար, որ *«նա համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակություններին համակատարման ձևով հանցակցելու վերաբերյալ նախնական համաձայնություն ձեռք բերելով՝ Դանիել Մանվելի Հակոբյանի և անհայտ անձի հետ, համատեղ, մեկը մյուսի գործողությունները լրացնելով՝ միասնական դիտավորությամբ՝ շարունակական արարքներով, հանցավոր ճանապարհով ֆինանսական միջոցներ ձեռք բերելու շահադիտական նպատակով՝ 2019 թվականի փետրվարի 28-ից մինչև 2020 թվականի հուլիսի 09-ն ընկած ժամանակահատվածում «ok.ru» սոցիալական կայքում գրանցված օգտատերերի էջերից բեռնել են վերջիններիս էջերում առկա լուսանկարները և տվյալները, որոնց միջոցով նույն կայքում ստեղծել են կեղծ էջեր՝ դրանք նմանեցնելով «ok.ru» սոցիալական կայքում գրանցված օգտատերերի իրական էջերին և ստեղծված կեղծ նմանակ էջերի միջոցով իրական էջերի օգտատերերի անունից, նամակագրություն են վարել իրական էջերի ընկերների ցանկում ընդգրկված անձանց հետ, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ նրանց քարտային հաշիվներից գումարներ հափշտակելու չկոնկրետացված դիտավորությամբ, վերջիններիս քարտային հաշիվներին գումարներ փոխանցելու պատրվակով, խաբեությամբ ստացել են նրանց կամ նրանց մտերիմների բանկային քարտերի տվյալները՝ քարտերի վավերապայմանները, կամ դրանց երկկողմ լուսանկարները, ինչպես նաև՝ դրամական ելքային փոխանցումների հաստատման նպատակով քարտային հաշիվներին փոխկապակցված բջջային հեռախոսահամարներին հաղորդագրությունների ձևով թվերի տեսքով ստացված գաղտնաբառերը, այն ներկայացնելով որպես իրենց կողմից փոխանցվող գումարի հաստատման գաղտնաբառ, որոնց և համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, հիշյալ*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 44, թերթեր 192-356:

ժամանակահատվածում խմբի կազմում, համատեղ, մեկը մյուսի գործողությունները լրացնելով, չկոնկրետացված մեկ միասնական դիտավորությամբ մի շարք անձանց քարտային հաշիվներից հափշտակել են առանձնապես խոշոր չափերի՝ 10.914.540 ՀՀ դրամ գումար և նպատակ ունենալով՝ հանցավոր գործունեության ընթացքում՝ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի՝ 10.914.540 ՀՀ դրամ գումարը՝ գույքը, օրինականացնելու, հանցավոր խմբում ընդգրկված անձանց, ինքնության գաղտնիությունը և հանցավոր գործողության կատարումը թաքցնելու մեխանիզմն ի կատար ածելու նպատակով «ok.ru» կայքում գրանցված օգտատերերից խաբեությամբ ստացել են նրանց կամ նրանց մտերիմների կողմից օգտագործվող բջջային հեռախոսահամարները և այդ հեռախոսահամարներին ՀՀ և ՌԴ տարածքում գործող էլեկտրոնային դրամապանակներ ակտիվացնելու նպատակով հաղորդագրությունների ձևով թվերի տեսքով ստացված գաղտնաբառերը, որոնց և համակարգչային տեխնիկայի, բջջային հեռախոսների, միջոցով ՀՀ-ում գործող՝ «Թել-Սել» ՓԲ, «Իդրամ» ՍՊ և «Իզի Փեյ» ՍՊ ընկերություններում, ինչպես նաև՝ ՌԴ տարածքում գործող «Qiwi» ընկերությունում գրանցել են էլեկտրոնային դրամապանակներ և հաշվառման հաշիվներ, որոնց տնօրինման և օգտագործման համար, ինչպես նաև՝ հանցավոր խմբում ընդգրկված անձանց, ինքնության գաղտնիությունը և հանցավոր գործողության կատարումը թաքցնելու մեխանիզմն ի կատար ածելու նպատակով դրանք նույնականացրել են «ok.ru» սոցիալական կայքի օգտատերերից խաբեությամբ ստացած բանկային քարտերի և անձնագրային տվյալներով: «ok.ru» սոցիալական կայքի օգտատերերից հափշտակված առանձնապես խոշոր չափերի դրամական միջոցները, գույքը՝ կենտրոնացնելով իրենց կողմից կառավարվող և տնօրինվող «Իդրամ», «Թել-Սել Ուալլեթ» և «Իզի Ուալլեթ» էլեկտրոնային դրամապանակների հաշիվներում դրանք օրինականացնելու և դրանց հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով փոխանցել են՝ «QiwiWallet Russian», «Yandex.Money Russian» էլեկտրոնային դրամապանակների հաշիվների և բանկային քարտերի հաշիվների, իսկ հանցավոր խմբում ընդգրկված անձանց, ինքնության գաղտնիությունը և հանցավոր գործողության կատարումը թաքցնելու նպատակով՝ ապօրինի հասանելիություն են ստացել իրենց հարևանությամբ բնակվող անձանց բնակարաններում տեղադրված «WiFi»

ուղեցրիչներին և համակարգչային տեխնիկայով գործողություններ կատարելու ընթացքում համացանցային հասանելիություն են ստացել այլ անձանց անվամբ կապի օպերատորների կողմից տրամադրված համացանցային հասանելիության IP (ինտերնետ պրոտոկոլի) հասցեներից (…)»[2]*:*

4.2. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ Վաչե Սամվելի Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն բանի համար, որ *«նա հանցավոր խմբում ընդգրկված անձանց՝ Դանիել Հակոբյանի, Կարեն Ներսիսյանի և անհայտ անձի կողմից համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակված զգալի չափերի՝ 381.200 ՀՀ դրամ գումարի ծագման աղբյուրը խեղաթյուրելու և թաքցնելու նպատակով, հիշյալ անձանց կողմից կատարած հանցանքի համար պատասխանատվությունից խուսափելու համար օժանդակելով, Արմեն Արտաշեսի Հայրապետյանի անվամբ թողարկված բանկային քարտերը տրամադրել է հանցավոր խմբի անդամներին, որոնց կողմից հանցավոր ճանապարհով ստացված գումարները, փոխանցվել են իր կողմից տրամադրված Արմեն Արտաշեսի Հայրապետյանի անվամբ թողարկված բանկային քարտերի հաշվեհամարներին, այնուհետև՝ 2019 թվականի փետրվարի 12-ից մինչև 2019 թվականի սեպտեմբերի 19-ն ընկած ժամանակահատվածում, հաստատապես իմանալով, որ այդ գումարը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով, իր և հանցավոր խմբի անդամների կողմից դրանք կանխիկացվել են՝ ձեռք են բերվել, տնօրինվել և օգտագործվել դրանք, այդ կերպ ուղղակի դիտավորությամբ օրինականացրել հանցավոր ճանապարհով ձեռք բերված զգալի չափերի՝ 381.200 ՀՀ դրամ գույքը (…)»*[3]*:*

4.3. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ Գարիկ Յուրիկի Սողոմոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն բանի համար, որ *«նա հանցավոր խմբում ընդգրկված անձանց՝ Դանիել Հակոբյանի, Կարեն Ներսիսյանի և անհայտ անձի կողմից համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակված զգալի չափերի՝ 1.185.605 ՀՀ դրամ գումարի ծագման աղբյուրը խեղաթյուրելու և թաքցնելու*

---

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 44, թերթեր 13-176:
[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 44, թերթեր 361-364:

նպատակով, հիշյալ անձանց կողմից կատարած հանցանքի համար պատասխանատվությունից խուսափելու համար օժանդակելով, իր անվամբ թողարկված բանկային քարտերը տրամադրել է հանցավոր խմբի անդամներին, որոնց կողմից հանցավոր ճանապարհով ստացված գումարները, փոխանցվել են իր անվամբ թողարկված բանկային քարտերի հաշվին, այնուհետև՝ 2019 թվականի հոկտեմբերի 06-ից մինչև 2020 թվականի ապրիլի 17-ն ընկած ժամանակահատվածում, հատուցապես իմանալով, որ այդ գումարը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով, իր կամ հանցավոր խմբի անդամների կողմից դրանք կանխիկացվել են՝ ձեռք են բերվել, տնօրինվել և օգտագործվել դրանք, այդ կերպ ուղղակի դիտավորությամբ օրինականացրել հանցավոր ճանապարհով ձեռք բերված զգալի չափերի՝ 1.185.605 ՀՀ դրամ գույքը (…)»[4]:

4.4. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ Նվեր Յուրիկի Ստեփանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն բանի համար, որ *«նա հանցավոր խմբում ընդգրկված անձանց՝ Դանիել Հակոբյանի, Կարեն Ներսիսյանի և անհայտ անձի կողմից համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակված զգալի չափերի՝ 203.000 ՀՀ դրամ գումարի ծագման աղբյուրը խեղաթյուրելու և թաքցնելու նպատակով, հիշյալ անձանց կողմից կատարած հանցանքի համար պատասխանատվությունից խուսափելու համար օժանդակելով, իր եղբոր Արման Յուրիկի Ստեփանյանի անվամբ թողարկված բանկային քարտերը տրամադրել է հանցավոր խմբի անդամներին, որոնց կողմից հանցավոր ճանապարհով ստացված գումարները, փոխանցվել են Արման Ստեփանյանի անվամբ թողարկված բանկային քարտերի հաշվին, այնուհետև՝ 2019 թվականի փետրվարի 28-ի՝ ժամը 19:22-ից մինչև ժամը 19:31-ն ընկած ժամանակահատվածում Նվեր Ստեփանյանը, հատուցապես իմանալով, որ այդ գումարը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով, իր կողմից դրանք կանխիկացվել են՝ ձեռք են բերվել, տնօրինվել և օգտագործվել դրանք, այդ կերպ ուղղակի դիտավորությամբ օրինականացրել հանցավոր ճանապարհով ձեռք բերված զգալի չափերի՝ 203.000 ՀՀ դրամ գույքը (…)»*[5]:

---

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 44, թերթեր 183-186:
[5] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 44, թերթեր 370-372:

4.5. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի օգոստոսի 14-ի որոշմամբ Կարեն Սոկրատի Մարգարյանը ներգրավվել է որպես մեղադրյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով՝ այն բանի համար, որ *«նա հանցավոր խմբում ընդգրկված անձանց՝ Դանիել Հակոբյանի, Կարեն Ներսիսյանի և անհայտ անձի կողմից համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակված զգալի չափերի՝ 2.752.000 ՀՀ դրամ գումարի ծագման աղբյուրը խեղաթյուրելու և թաքցնելու նպատակով, հիշյալ անձանց կողմից կատարած հանցանքի համար պատասխանատվությունից խուսափելու համար օժանդակելով, իր անվամբ թողարկված բանկային քարտերը տրամադրել է հանցավոր խմբի անդամներին, որոնց կողմից հանցավոր ճանապարհով ստացված գումարները, փոխանցվել են իր անվամբ թողարկված բանկային քարտի հաշվին, այնուհետև՝ 2019 թվականի մարտի 24-ից մինչև 2019 թվականի հուլիսի 12-ն ընկած ժամանակահատվածում, հատուցապես իմանալով, որ այդ գումարը ձեռք է բերվել հանցավոր ճանապարհով, իր կամ հանցավոր խմբի անդամների կողմից դրանք կանխիկացվել են՝ ձեռք են բերվել, տնօրինվել և օգտագործվել դրանք, այդ կերպ ուղղակի դիտավորությամբ օրինականացրել հանցավոր ճանապարհով ձեռք բերված զգալի չափերի՝ 2.752.000 ՀՀ դրամ գույքը (…)»*[6]:

5. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի փետրվարի 19-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Վերոգրյալ իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Դանիել Հակոբյանին, Կարեն Ներսիսյանին, Վաչե Հովհաննիսյանին, Գարիկ Սողոմոնյանին, Նվեր Ստեփանյանին և Կարեն Մարգարյանին առաջադրված մեղադրանքների համաձայն՝ վերջիններիս կողմից ենթադրյալ փողերի լվացումը չի կատարվել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0050/01/22 քրեական գործն այլևս ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին, այլ ընդդատյա է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր*

[6] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 44, թերթեր 1-5:

իրավասության քրեական դատարանին, ուստի անհրաժեշտ է թիվ ՀԿԴ/0050/01/22 քրեական գործը փոխանցել ըստ ընդդատության (…)»[7]*:*

6. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի մարտի 1-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դեռևս 2023 թվականի հուլիսի 12-ին կայացած դատական նիստի ընթացքում Հակակոռուպցիոն դատարանը կայացրել է ապացույցների ծավալը սահմանելու մասին որոշում, այնուհետև կայացած դատական նիստերի ընթացքում հարցաքննվել են վկաներ և փուժողներ:*

Հետևաբար՝ վերոնշյալ հանգամանքները համադրելով և գնահատելով վերաբերելի իրավական նորմերի համատեքստում ստացվում է, որ դատական քննության ընթացքում ընդդատության կանոնի խախտում (այսինքն այնպիսի հանգամանքներ, որ վարույթն իրականացնող դատարանը գործը վարույթ ընդունելիս չգիտեր և չէր կարող իմանալ) չի հայտնաբերվել: Վերոգրյալի հաշվառմամբ՝ գտնում եմ, որ դատաքննության սույն փուլում, երբ արդեն հարցաքննվել են մի շարք փուժողներ և վկաներ, քրեական գործի ընդդատության փոփոխությունը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից:

(…)

Իրավական ակտի գործողությունը, որպես կանոն, տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա: Իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն տվյալ Սահմանադրությամբ, օրենքով, ինչպես նաև իրավական ակտով նախատեսված դեպքերում:

Իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների, բացառությամբ նրա առանձին մասերը վերացված կամ անվավեր կամ չեղյալ ճանաչելու դեպքերի, գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե սույն օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև

---

[7] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 69, թերթեր 73-77:

փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե սույն օրենքով կամ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալները, գտնում եմ, որ 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-31-Ն ՀՀ օրենքը չի պարունակում անցումային դրույթներ: Օրենքում բացակայում է դրույթն առ այն, որ տվյալ Օրենքի դրույթները տարածվում են մինչ դրա ուժի մեջ մտնելու պահը գործող հարաբերությունների վրա: Հետևաբար գտնում եմ, որ վերոգրյալ օրենքը չի կարող տարածվել մինչև այդ գործող հարաբերությունների վրա (…)»[8]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՍԴ1/0063/01/21 (ՀԿԴ/0050/01/22) քրեական վարույթը ենթակա չէր փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի*

[8] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 70, թերթեր 1-4:

կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[9]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[10]:

10. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ

---

[9] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[10] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[11]*:*

11. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ*

[11] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

12.1. «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Օրենսգրքի հավելված N 1-ում՝*

*1) **«Հոդված 296. Փողերի լվացումը»** բառերը փոխարինել **«Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝** իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով (…)»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ

սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերի համաձայն՝ *«23. (…) Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ենթակա (…) կոոուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոոուպցիոն դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև, բացառությամբ սույն հոդվածի 24-րդ մասով սահմանված դեպքի:*

24. Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող՝ սույն մասով նախատեսված գործերը ենթակա չեն վերաբաշխման հակակոոուպցիոն դատարանին, եթե տվյալ գործով անցում է կատարվել դատաքննության փուլ»:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոոուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը վերաբաշխվում են հակակոոուպցիոն դատարանի դատավորների միջև, եթե տվյալ գործերով անցում չի կատարվել դատաքննության փուլ»:*

12.2. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա): (…):*

3. Օրենքի կամ իրավունքի անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտականություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են նրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության, հարկադրանքի միջոցները կամ դրանց կիրառման կարգը, հարկերի, տուրքերի և այլ

պարտադիր վճարների վճարման կարգը, անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու պայմանները և կարգը:

4. Օրենքի անալոգիան և իրավունքի անալոգիան կարող են կիրառվել միայն, եթե տվյալ օրենքով չի արգելվում անալոգիայի կիրառումը»:

13. Նշված նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16–ին ընդունված ՀՕ-31-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխության արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի (համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածին) 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետով նախատեսված արարքներն այլևս չեն հանդիսանում կոռուպցիոն բնույթի հանցանքներ և ընդգրկված չեն ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում, հետևաբար դրա վերաբերյալ վարույթներն ընդդատյա են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: Սակայն, կատարված փոփոխությամբ որևէ կարգավորում չի սահմանվել առ այն, թե արդյո՞ք այդ փոփոխությունը պետք է տարածվի Հակակոռուպցիոն դատարանում դատաքննության փուլում գտնվող նմանատիպ վարույթների վրա, այլ կերպ՝ արդյո՞ք այդ վարույթները ենթակա են վերաբաշխման, թե ոչ:

Այդուհանդերձ, դեռևս 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունված ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ այն գործերը, որոնցով **անցում է կատարվել դատաքննության փուլ, ենթակա չեն վերաբաշխման հակակոռուպցիոն դատարանին:** Այսինքն, ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքով լուծում է տրվել համանման իրավահարաբերությանը, ըստ որի՝ դատաքննության փուլ անցում կատարված լինելու դեպքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող վարույթի փոխանցումը Հակակոռուպցիոն դատարան իրավաչափ չէ:

13.1. Հաշվի առնելով, որ ինչպես «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չեն արգելում անալոգիայի կիրառումը, ինչպես նաև այն, որ տվյալ պարագայում անալոգիայի կիրառումն անձանց իրավունքները, ազատությունները չի սահմանափակում կամ նրանց համար նոր պարտականություն կամ պատասխանատվություն չի նախատեսում՝ գտնում ենք, որ Հակակոռուպցիոն դատարանների վարույթում գտնվող՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի հիման վրա առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա վարույթների վերաբաշխման հարցը պետք է լուծվի ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն օրենքի 19-րդ հոդվածի 23-րդ և 24-րդ մասերին և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասին համահունչ: Այլ կերպ՝ այն վարույթները, որոնցով Հակակոռուպցիոն դատարանն անցում է կատարել դատաքննության (հիմնական դատալսումների) փուլ, ենթակա չեն վերաբաշխման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի հուլիսի 10-ին կայացած դատական նիստի ընթացքում անցում է կատարել դատաքննության փուլ[12]:

[12] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 67, դատական նիստի արձանագրություն, թերթ 123:

- Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին՝ փաստելով, որ համաձայն Դ.Հակոբյանին, Կ.Ներսիսյանին, Վ.Հովհաննիսյանին, Գ.Սողոմոնյանին, Ն.Ստեփանյանին և Կ.Մարգարյանին առաջադրված մեղադրանքների՝ վերջիններիս կողմից ենթադրյալ փողերի լվացումը չի կատարվել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու եղանակով[13]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ գործը գտնվում է դատաքննության փուլում և արդեն հարցաքննվել են մի շարք տուժողներ և վկաներ, ինչպես նաև այն, որ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքը չի պարունակում անցումային դրույթներ, գտել է, որ քրեական գործի ընդդատության փոփոխությունը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից[14]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքով և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-333-Ն օրենքով նախատեսված իրավակարգավորումների լույսի ներքո, թիվ ՍԴ1/0063/01/21 (ՀԿԴ/0050/01/22) քրեական վարույթը ենթակա չէր վերաբաշխման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, քանի որ սույն վարույթով Հակակոռուպցիոն դատարանն անցում է կատարել դատաքննության փուլ:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ

---

[13] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[14] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

ՍԴ1/0063/01/21 (ՀԿԴ/0050/01/22) քրեական վարույթը ենթակա չէր փոխանցման առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, հիմնավոր է:

17. Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև, ելնելով արդարադատության շահի պաշտպանության և վարույթի արդարացիության ապահովման՝ ողջամիտ ժամկետում քննության անհրաժեշտությունից, գտնում ենք, որ թիվ ՍԴ1/0063/01/21 (ՀԿԴ/0050/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Դանիել Մանվելի Հակոբյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Կարեն Լորիկի Ներսիսյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Վաչե Սամվելի Հովհաննիսյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով, Գարիկ Յուրիկի Սողոմոնյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով, Նվեր Յուրիկի Ստեփանյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով և Կարեն Սոկրատի Մարգարյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով թիվ ՍԴ1/0063/01/21 (ՀԿԴ/0050/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ